community

The New Apostolic Church around the world

01/2026/AM

Մի վախեցիր, այլ միայն հավատա

Խմբագրական
Մի վախեցիր, այլ միայն հավատա

Ժամերգություն
Հինգ քայլ դեպի կատարյալ տոն

Վարդապետական ուսմունք
Որտե՞ղ է այսօր Հիսուս Քրիստոսն իրեն ապրել տալիս

Երբ Աստված ինքն է ,, ցտեսություն,, ասում

New Apostolic Church
International

Մի վախեցիր, այլ միայն հավատա:

Լուսանկարը՝ Միջազգային Նորաստեղծ ընկերությունների

Սիրելի քույրեր և եղբայրներ,

2026 թվականի մեր կարգախոսը Հիսուսի հետևյալ խոսքն է .,,Մի վախեցիր, այլ միայն հավատա,,:

Մենք ապրում ենք մի աշխարհում, որը մեզ մարտահրավերների առաջ է կանգնեցնում՝ հասարակության մեջ վեճ, ձայնի կոշտ երանգ ու բազմաթիվ այլ տոնայնություններ, որոնց մեջ Աստված հազիվ է երևում:

Վախը հեշտորեն որոշում է մեր գործողությունները- այն բաժանում է, խաթարում և հարց առաջացնում՝ Ի՞նչ է լինելու հետո:

Հիսուսը մեզ կոչ է անում վստահել իրեն՝ ,, Հավատա ինձ,,: Նրա խոսքն ու սերն են կողմնորոշում տալիս մեր մտածողությանն ու գործողություններին , ոչ թե՝ անվստահությունն ու մտահոգությունը: Կարող ենք վստահ լինել, որ այն ամենում, ինչը վերաբերում է մեզ, Աստված իր գործի մեջ է, մեր այսօրվա առօրյա կյանքի կենտրոնում: Նա մեզ համար ապագա է պատրաստում իր արքայությունում:

Ամուր հավատը մեզ ուժեղացնում է: Ժամանակ գտնենք զբաղվելու մեր հավատամքով: Եկեք դրոշմվենք նրա բովանդակությամբ: Դա մեզ օգնելու է հաղթահարել մեր վախերը և հանգիստ ու խաղաղ լինել վտանգների դեմ հանդիման: Այսպես կարող ենք վստահությամբ գնալ դեպի նոր տարի, որն ավելի մեծ է, քան այն, ինչը մտահոգություն է պատճառում մեզ:

Մի վախեցիր:

Ժան –Լյուք Շնայդեր

Հինգ քայլ դեպի լավագույն տոն

Լուսանկարները՝ ՆԱԵ ԿժՀ Հարավ-Արևելք

Կիրակի օրը, 2025-ի հուլիսի 27-ին, գլխավոր առաքյալ Ժան -Լյուք Շնայդերը ժամերգություն անցկացրեց Մբուժի Մայիում՝ Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության Հարավ- Արևելքում

Հայտնություն 19,7

Ուրախանանք և ցնծանք ու փառք տանք նրան, քանի որ հասավ Գառան հարսանիքի ժամը:

Սիրելի եղբայրներ և քույրեր, այս կիրակին առանձնահատուկ օր է ձեզ և ինձ համար: Երկար ենք սպասել միմյանց նորից տեսնելու համար: Ամբողջ սրտով շնորհակալ եմ Աստծուն, որ նա ինձ թույլ է տվել նորից տեսնել ձեզ, բոլորիդ, իմ քույրեր և եղբայրներ, այստեղ և ամբողջ երկրում: Ուրախությունը մեծ է, որովհետև մենք ձեզնից շատերի հետ կարողացանք հանդիպել: Այստեղ Մբուժի Մայիում, բավականին մեծ թվաքանակով ենք հավաքվել: Այնուամենայնիվ, մեր հավաքույթի պատճառը մնում է նույնը, ինչպես յուրաքանչյուր կիրակի: Մենք այստեղ ենք, որովհետև մենք քրիստոնյաներ ենք:

Կիրակի մենք սրբացնում ենք օրը: Մենք աղոթում ենք, երգում, քարոզ լսում, ընդունում Սուրբ Հաղորդությունը և մեղքերի քավությունը: Բայց,

ամենից առաջ մենք տոնում ենք Հիսուս Քրիստոսի հարությունը: Կիրակին մեզ հիշեցնում է, որ Հիսուսն ապրում է: Նա հաղթահարել է մահին և չարին: Այս իմացությունը մեզ ուժ և հույս է տալիս: Երբ մենք տոնում ենք նրա հարությունը, դրանով և նախապատրաստվում ենք մեր սեփական հարությանը: Քանզի Հիսուսը խոստացել է նորից գալ, որպեսզի իր հարսնացուին տանի: Դրա համար էլ մենք հավաքվում ենք, որպեսզի մեր հոգիները նախապատրաստենք նրա գալստյանը: Հենց դրա մասին է խոսում աստվածաշնչյան մեր խոսքը՝ Գառան հարսանիքի խնջույքը:

Երբ Աստվածաշնչում խոսվում է այն հարաբերության մասին, որը մարդկանց կապում է Աստծո հետ, հաճախ առաջ է գալիս զույգի պատկերը: Հին կտակարանում Իսրայելի ժողովուրդը ներկայացվում է որպես Տիրոջ կողմից ընտրված հարսնացու: Աստված ամուսինն է, ով Ուխտ է կապել իր կնոջ հետ հավատարիմ մնալ, անգամ, եթե նա անհավատարիմ լինի իր հանդեպ: Նոր կատակարանում Հիսուսն անդրադառնում է այդ պատկերին՝ նա փեսան է, իր եկեղեցին՝ հարսը: Ով նրան հետևում և հավատարիմ է մնում, պատկանում է իր հարսնացուին: Այն կապը, որը կապում է այս երկուսին, սերն է: Եվ, երբ Հիսուսը բնութագրվում է որպես Գառ, ապա սա հիշեցնում է այն մասին, որ նա իր յուրայիններին այնքան շատ էր սիրում, որ պատրաստ էր նրանց համար մեռնել, նրանց համար զոհաբերվել: Հիսուսն ինքն է ասում, որ իր հարսնացուները նրանք են, ովքեր ամբողջ սրտով, ամբողջ հոգով և ամբողջ մտքով սիրում են Աստծուն: Հարսանիքը փոխաբերական իմաստով խորհրդանշում է առաջին հարությունը: Ընտրվածները Քրիստոսի հետ կատարյալ միասնություն են կազմելու: Նրանք հավերժ և կատարյալ միասնության մեջ են լինելու նրա հետ: Այս միասնությունն ավելին է, քան այն, երբ երկու մարդ ամուսնանում են իրար հետ, քանի որ Սուրբ գիրքն ասում է՝ Ապա ուրեմն՝ ոչ թե երկու, այլ մեկ մարմին / Մատթեոս 19,6/: Այսպես, Հիսուսն ու իր հարսնացուն ոչ միայն միասին են լինելու հավերժ, այլ կատարյալ միասնության մեջ են լինելու նույն բնույթով, նրանք բոլորն ունենալու են հարության մարմին: Դրա համար էլ շատ կարևոր է, որ մենք նմանվենք Հիսուսին, այլապես չենք կարող նրա հարսնացուն համարվել, չենք կարող հավերժ նրա հետ լինել Աստծո արքայությունում:

Այսօր մենք դեռ ապրում ենք հարսանիքի նախապատրաստության ժամանակաշրջանում: Հարսնացուն պետք է մաքրվի և սրբացվի, որպեսզի կարողանա Աստծո արքայություն մտնել: Այդ նախապատրաստության մեծ գործը Հիսուսն ինքն է արել՝ իր զոհաբերությամբ մաքրել է հարսացուին, նա նաև իր խոսքով է մաքրել նրան, և Աստված միշտ ներում է մեր մեղքերը: Այսինքն՝ աշխատանքի մեծ մասը արել է Աստված: Սակայն, Պողոսն ասում է, որ Հիսուսը նաև առաքյալներ է ուղարկել, որպեսզի նախապատրաստեն հարսնացուին քարոզով, մեղքերի ներումով, եկեղեցական խորհուրդներով՝ սուրբ ջրով մկրտությամբ, Սուրբ Հոգով կնունքով, Սուրբ Հաղորդությամբ: Առաքյալների էական առաջադրանքը հարսացուին Քրիստոսի գալստյանը նախապատրաստելն է:

> Վստահիր ինձ: Ես ասում եմ քեզ, դա այդպես է: Հավատա դրան:

Սակայն, սա չի նշանակում, որ մենք միայն կարող ենք ասել՝,, Այդ դեպքում, առաքյալ, նախապատրաստիր ինձ,,: Ոչ, այդպես չի լինի: Բավարար չէ միայն մկրտվելն ու կնքվելը, կանոնավոր ժամերգությունների գալը և Սուրբ Հաղորդություն ստանալը, որպեսզի վերջում ավտոմատ ձևով ընդունվեն Հիսուսի կողմից: Աստվածաշնչյան խոսքն ասում է՝ նրա կինը նախապատրաստվել է: Դա նշանակում է, որ նա ոչ միայն իրեն նախապատրաստել է տալիս Աստծո և առաքյալների կողմից, այլ ինքն էլ իր մասնակցությունն է ունենում դրան, նա իսկական աշխատանք է կատարում:

Սիրելի եղբայրներ և քույրեր, դա նաև մեր առաջադրանքն է, մեր պատասխանատվությունը: Յուրաքանչյուրն ինքը պետք է ինքնուրույն նախապատրաստվի: Ես դա չեմ կարող քեզ համար անել, և դու չես կարող ինձ համար անել:

Ամենից առաջ պետք է հավատալ սովորել: Աստվածաշնունչն ասում է՝ առանց հավատի հնարավոր չէ Աստծուն դուր գալ, քանզի ով ուզում է դեպի Աստված գալ, նա պետք է հավատա / Եբր. 11,6/: Հավատալը նշանակում է վստահել Աստծու խոսքին, անգամ, եթե չես տեսնում, չես հասկանում: Մարդը միշտ նշաններ, ապացույցներ է ուզում: Նա ուզում է միշտ ամեն ինչ հասկանալ: Բայց, Աստված ասում է՝,, Ոչ, ես խոստանում եմ քեզ, իսկ դու հավատա իմ խոսքին: Քեզնից ավելին չեմ պահանջում,,: Հիսուսը շուտով նորից է գալու: Ամիս ամսաթվեր մի հաշվարկեք, նշաններ մի փնտրեք, ապացույցներ մի պահանջեք: Մի խորացեք այն բանի մեջ, թե դա ինչպես է տեղի ունենալու, պարզապես հավատացեք: Վստահեք նրան: Դա տեղի է ունենալու, որովհետև նա է մեզ դա ասել:

Հիսուսն ուղարկել է առաքյալներին, որպեսզի մեզ նախապատրաստեն իր գալստյանը: Սակայն, դու տեսնում ես ոչ կատարյալ մարդկանց, տեսնում ես եկեղեցուն և բոլոր սխալները, որ կատարվում են: Դու կասկածում ես՝ սա չի կարող Քրիստոսի եկեղեցին լինել, նրանք չեն կարող Աստծո կողմից ուղարկվածներ լինել: Ինչու՞ Աստված չի լուծում խնդիրները: Իսկ Հիսուսը պատասխանում է՝ ,, Վստահիր ինձ: Ես ասում եմ քեզ, դա այդպես է: Հավատա դրան,,:

Աստված ասում է, որ նա մեզ սիրում է: Բայց, ինչպե՞ս պետք է մենք դրան հավատանք: Մենք հիվանդ ենք, շատ խնդիրներ ունենք: Ինչու՞ է Աստված դա թույլ տալիս: Ինչպե՞ս կարող է Աստված մեզ ասել, որ սիրում է մեզ: Այնուամենայնիվ, Աստված պնդում է՝,, Ես սիրում եմ քեզ: Հավատա իմ խոսքին: Վստահիր ինձ,,:

Մենք բոլորս պետք է դեռ հավատալ սովորենք: Մենք բոլորս պետք է Աստծուն խնդրենք ասելով՝ ուժեղացրու իմ հավատը, այն դեռ շատ տկար է :

Երկրորդ կետը՝ պետք է ընդունել խորհուրդները, տեղ տալ դրանց և տարածել: Նախապատրաստությանն է պատկանում Սուրբ ջրով մկրտությունը: Սակայն, բավարար չէ միայն այս խորհուրդն ընդունելը: Պետք է նաև խոստումը պահել, որը կապված է դրա հետ: Մենք խոսք ենք տվել մերժել չարին, այն ամենը, ինչը հակառակ է Աստծո կամքին: Որպեսզի ջրով մկրտությունը կարողանա գործել, դու պետք է պահես քո խոստումը և մինչև վերջ պայքարես մեղքի դեմ: Դա ևս մշտական առաջադրանք է, քանի որ փորձությունները բազմաթիվ են:

Որպեսզի պատկանեն Քրիստոսին, պետք է ընդունեն Սուրբ Կնունքի խորհուրդը: Սուրբ Հոգու շնորհներով դու ստանում ես հնարավորություն որպես առաջնեկ Աստծո արքայություն մտնելու, բայց այդ հնարավորությունը քեզ օգուտ չի տա, եթե բացակայի Աստծո կամքը: Որպեսզի Սուրբ Կնունքն իր լիակատար ներգործությունն ունենա, պետք է Քրիստոսի հետ հավերժ լինելու մեր ցանկությունն իսկապես առաջին տեղում լինի:

Մենք պետք է կանոնավորապես ընդունենք Սուրբ Հաղորդությունը, այլապես չենք կարող ունենալ հավիտենական կյանք: Սակայն, Սուրբ Հաղորդությունը կախարդական հաբ չէ, որ մեր հարաբերությունները Աստծո հետ ավտոմատ ձևով կարգի բերի: Նրա փրկարար ազդեցությունը ծավալվում է միայն այն դեպքում, երբ սրտում

Քրիստոսի հարսնացուին պատկանելու համար պետք է ընդունել Սուրբ Կնունքի խորհուրդը:

ապրում է Քրիստոսի նման դառնալու իսկական ցանկությունը: Կան մարդիկ, ովքեր հիսուն տարի ի վեր յուրաքանչյուր կիրակի ընդունում են Սուրբ Հաղորդությունը՝ առանց որևէ ազդեցություն ցույց տալու, քանի որ իրականում չկա Հիսուսի նման լինելու կամքը:

Նախապատրաստությանն է պատկանում է նաև Քրիստոսին նմանվելը: Դրա համար պետք է սովորել Աստծուն սիրել այնպես, ինչպես նա է սիրում: Երկրի վրա իր կյանքի ընթացքում Հիսուսը կենտրոնում է պահում Աստծո հետ իր հարաբերությունը: Հիշեք անապատում նրա փորձության մասին՝ նա քաղցած էր, և սատանան նրան առաջարկեց ուտելիք ստանալ: Սակայն Հիսուսը մտածեց և ասաց՝ ,, Եթե ես դա անեմ, ես կհեռանամ իմ Հորից: Ես ուզում եմ մնալ իմ Հոր մոտ,,: Նրա սերը Աստծո հանդեպ իր համար ավելի կարևոր էր, քան իր անձնական կարիքները:

Սիրելի եղբայր, սիրելի քույր, իհարկե, մենք պետք է ձևավորենք մեր երկրային կյանքը, սակայն, այդ երկրայինը չպետք է խանգարի Աստծո հետ մեր հարաբերությանը: Հիսուսն այնպես էր ուզում միաբան լինել իր Հոր հետ, որ մի կողմ է դնում իր ցանկություններն ու կամքը, որպեսզի կատարի Հոր կամքը: Նա հաճույքով տանջանքն ու խաչը կհեռացներ իրենից, բայց, երբ իմացավ, որ Աստված այլ պլան ունի, ասաց ,, Թող քո կամքը լինի, ոչ՝ իմը,,: Տիրոջ գալստյանը նախապատրաստվելը նշանակում է Աստծո հետ միասնության մեջ լինել և սեփական գաղափարներն ի դեմս նրա ընդունել: Հիսուսն Աստծուն սիրում էր մինչև վերջ: Չնայած բոլոր փորձություններին՝ նա հավատարիմ մնաց: Նրան նմանվել՝ նշանակում է սիրել Աստծուն, ինչպես նա է սիրում, մեր հարաբերությունը Աստծո հանդեպ վեր դասենք ամեն ինչից, մի կողմ դնենք մեր սեփական կարծիքները և հաստատուն մնանք փորձությունների ժամանակ:

Մենք պետք է նաև սովորենք մերձավորին սիրելը, ինչպես Հիսուսն էր անում: Ինչպե՞ս էր սիրում Հիսուսը իր մերձավորին: Կարճ ասած՝ նա ուզում է, որ մարդիկ ընդունեն այն ամենը, ինչ ինքն է ստացել: Հիսուսի սերը երևում է նրանում, որ նա նույնիսկ ուզում է մեզ նվիրել հավիտենական փառահեղությունը, որը միայն նրան է պատկանում, և որը մենք չենք վաստակել: Նա ծառայում է մարդկանց սիրուց ելնելով: Նա չի ասում՝ ,, Դու, ինքդ հոգա դրա համար,,: Ոչ, Աստծո Որդին ցածրանում է,

Ժամերգությանը մասնակցել է 15 000 հավատցյալ քույր և եղբայր

որպեսզի օգնի մեզ՝ հասնելու այդ փառահեղությանը: Քանի որ մենք դա չենք վաստակել, նա մեզ օգնում է նաև այս հարցում: Հիսուսը հնազանդ էր և ծառայում էր իր մերձավորին: Նա միշտ պատրաստ էր ներելու, երբ որևէ մեկը մեղք էր գործում: Մերձավորին նրա նման սիրելը նշանակում է, որ ես իմ մերձավորին սիրում եմ ինչպես իմ կնոջը կամ իմ երեխաներին, կամ, որ ես սիրում եմ բոլոր մարդկանց այնպես, ինչպես սիրում եմ իմ մոտիկ ընկերներին: Քրիստոսի սերը նշանակում է կամենալ, որ ուրիշներն էլ նույն փրկությանն ու փառահեղությանը հասնեն, որը ցանկանում է նվիրել Հիսուսը: Մերձավորին սիրելը նշանակում է օգնել նրան հասնելու փրկության նրանով, որ նրան բարին անես, անգամ այն դեպքում, եթե նա չարիք է գործել քո հանդեպ: Սա նշանակում է նմանվել Քրիստոսին՝ Աստծուն և մերձավորին սիրել այնպես, ինչպես Հիսուսն էր սիրում:

Մեկ այլ կետ էլ ողորմածությունն է: Մենք կարիք ունենք ողորմածության, քանի որ ոչ մեկը կատարյալ չէ: Դրա համար էլ մենք պետք է ձգտենք մեր մեղքերի քավությանը: Դա ոչ ինքնուրույն է լինում, ոչ էլ՝ ավտոմատ ձևով: Իսկ սա նորություն չէ՝ առաքյալները տասնամյակներ ի վեր ուսուցանել են սա, դա գրված է դավանաբանության մեջ: Որպեսզի հասնենք մեղքերի քավության, անխուսափելի է սեփական մեղքերը խոստովանելը, արդարացիորեն զղջալը, առանց դրանք թերագնահատելու կամ հարաբերականացնելու ցանկության, որպեսզի խնդրենք ներում և լրջորեն ձգտենք մեզ ավելի լավացնելու: Ինձ մի քիչ անհանգստացնում է այն, երբ ես լսում եմ, որ վերջում Աստված առանց որևէ բանի բոլորին ողորմածություն է նվիրելու: Կան Աստծո զավակներ, ովքեր բաներ են անում, որոնք չպետք է անեն՝ գողանում են, վիճաբանում են, ստում են: Հետո նրանք ասում են՝,, Սիրելի Աստված գիտի, որ ես փողի կարիք ունեմ: Նա հասկանում է դա, նա կների ինձ ,,: Ոչ, Դու խոստովանե՞լ ես քո մեղքը: Իսկապես զղջացե՞լ ես, ինչ արել ես: Կամ միայն զղջացել ես, որ ներվե՞ս: Սա իսկական զղջում չէ: Դու իսկապե՞ս ներում ես խնդրել: Դու ամուր կամք ունե՞ս, դա նորից չկրկնելու համար: Շատերն են տասնամյակներ շարունակ այդպես արել և մտադիր էլ չեն փոխվելու, մինչև դրա մեջ բռնվելը: Ոչ մի զղջում, ոչ մի ներում:

Սա չհասկանաք որպես սպառնալիք: Ես միայն քարոզում եմ Ավետարանը: Ես չեմ դա հորինել: Բայց, ես անհանգստանում եմ իմ եղբայրների և քույրերի համար: Հաճախ է բացակայում իսկական զղջումը: Երբ ես երիտասարդ էի, մի եպիսկոպոս ինձ միշտ ասում էր՝,, Երբեք մի մոռացիր, որ Աստված պարտավոր չէ քեզ Տիրոջ գալստյան ժամանակ իր հետ տանելու միայն բանի համար, որ դու նորառաքելական ես, եկեղեցի ես գնում և հոգևոր պաշտոնում ես ծառայում:

Ուրեմն՝ մեզ նախապատրաստենք Քրիստոսի գալստյանը, որ նա կարողանա իր ողջ ողորմածությունը մեզ նվիրել:

Մեր նախապատրաստության վերջին կետը՝ հասնել միաբանության: Աստված ուզում է, որ մենք միաբան լինենք: Հիսուսն ասում էր՝ Յուրաքանչյուր մարդ կճանաչի, որ դուք իմ աշակերտներն եք, եթե իրար սիրով վերաբերվեք/ Հովհ. 13,35/: Մենք պետք է այստեղ և այսօր սովորենք Քրիստոսով միաբան լինելը: Մենք պետք է հաղթահարենք տարբերությունները, ըմբռնենք, որ ուրիշներն այլ են: Մենք պետք է միմյանց ներենք, իրար հետ հաշտվենք: Հիսուսը ցանկանում է միաբանված եկեղեցի: Եվ մենք պետք է առանց հոգնելու աշխատենք հանուն այդ միասնության: Դա մեր նախապատրաստության հինգերորդ կետն է:

Շրջանային առաքյալ Թոմաս Դոյբել

Շրջանային առաքյալ Էլիե Թաթիեն Մուկինդա

Աստվածաշնչյան խոսքը նկարագրում է Գառան հարսանիքը որպես կատարված իրողություն: Դա չի նշանակում, որ մենք ինչ-որ բան բաց ենք թողել: Աստված վեր է ժամանակից: Անցյալը, ապագան և ներկան միասին են նրա համար: Երբ Աստված մեզ հետ խոսում է Գառան հարսանիքի մասին, նա նկարագրում է իրողությունը, մի բան, որն արդեն գոյություն ունի, որը, սակայն, մենք դեռ չենք կարող տեսնել: Այլ խոսքերով ասած՝ ոչինչ չի կարող դրան խանգարել: Ոչինչ չի կարող Հիսուսին խանգարել նորից գալ և իր հետ տանել նրանց, ովքեր նախապատրաստված են: Իսկ դրա համար մենք կարող ենք ուրախանալ:

Ուրախանանք, շուտով չարը վերջնականապես կանհետանա: Մենք Հիսուսի հետ ապրելու ենք Աստծո արքայությունում, որտեղ ոչ տառապանք կա, ոչ՝ մահ և ոչ էլ՝ անարդարություն: Դրա փոխարեն մեզ սպասում է կատարյալ, հավերժ երջանկությունը: Ուրախացիր, քանի որ դու նմանվելու ես Հիսուսին: Նա քեզ կատարյալ է դարձնելու: Քո սխալներն ու ոչ կատարյալ լինելն անհետանալու են: Ուրախացիր, նաև քո եղբայրը, քո քույրը, քո մերձավորն ազատված են լինելու չարից և կատարյալ են դառնալու: Ուրախացիր, շուտով մենք ողջերի և մահացածների հետ Քրիստոսով միաբանվելու ենք: Դու այլևս քո մերձավորին ակամա չես վիրավորելու: Ոչ ոք այլևս ցավ չի պատճառելու չար խոսքերով: Մենք բոլորս նմանվելու ենք Հիսուսին, միաբան ենք լինելու Քրիստոսով: Ուրախացիր, այդ ամենը տեղի է ունենալու: Ուրախացիր, մինչ կնախապատրաստվես դրա համար:

Այո-ն ասելն ու նախապատրաստվելը հեշտ չէ: Պետք է հավատալ՝ առանց ամեն ինչ հասկանալու: Պետք է լսել, եթե անգամ դա դժվար է: Պետք է ներել, անգամ, եթե այն ցավ է պատճառում: Պետք է ծառայել, անգամ, եթե զոհեր է պահանջվում: Պետք է մերժել այս կամ այն բանը: Հավանաբար դու կմտածես՝,, Այս եկեղեցում այնքան շատ խնդիրներ կան: Դրանք խանգարում են ինձ,,: Սակայն, հիշիր, թե ինչու համար ես դու նախապատրաստվում: Ով իսկապես ուզում է լինել Հիսուսի հետ, ուրախանում է, փոխվում է, որպեսզի նրան նմանվի: Նա հնազանդվում է ուրախությամբ, սիրում է ուրախությամբ, ներում է ուրախությամբ: Նա հաճույքով է ծառայում, հաճույքով է աշխատում համայնքի միասնության համար, քանի որ նա գիտի, թե ինչու է դա անում:

Իմ եղբայր, իմ քույր, նախապատրաստվիր Տիրոջ գալստյանը: Մտածիր, թե ինչ է նա քեզ նվիրելու, և ուրախությամբ նախապատրաստվիր դրա համար:

Հիմնական մտքեր

Մենք սպասում ենք Քրիստոսի գալստյանը: Հիսուսը սրբացնում է մեզ իր զոհաբերությամբ և իր խոսքով: Առաքյալները մեզ նախապատրաստում են դրա համար: Մենք նախապատրաստվում ենք նրանով, որ սովորում ենք հավատալ, սիրել Քրիստոսի նման և արժանի լինել ողորմածության: Հարսնացուական համայնքի մասնիկը լինելու հանգամանքը մեզ լցնում է ուրախությամբ:

Լուսանկարը՝ Հայաստան անի Նյութ

Արևմտյան Գերմանիա/ Հայաստան/Վրաստան

Արևմտյան Գերմանիայի տարածաշրջանի եկեղեցուց չորս երիտասարդ երաժիշտներ 2025-ի սեպտեմբերի վերջին նախաձեռնեցին երաժշտական ճանապարհորդություն դեպի Հայաստան ու Վրաստան: Նպատակը տեղի քույր-եղբայրներին ուրախություն պատճառելն էր, տեղի երաժիշտների հետ միասին նվագելը և այդպես Կովկասի համայնքներում երաժշտական ակտիվությանը նպաստելը:

2025-ի սեպտեմբերի 24-ից 30-ը Հայաստան և Վրաստան կատարած լարային քառյակի երիտասարդների ճանապարհորդության կենտրոնում երաժշտությունն էր, հանդիպումներն ու մերձավորի հանդեպ սիրո դրսևորումը: Ճանապարհորդությունը մաս էր կազմում Արևմտյան Գերմանիայի նորառաքելական եկեղեցու երաժշտական ծրագրի, որով իրենց հովանու ներքո գտնվող երկրներն են ուղարկվում երիտասարդ քրիստոնյաներ, որպեսզի շոշափելի դարձնեն միասնությունը և կոնկրետ գործերով բարին անեն: Դրանից բացի, առաքյալների փափագն է, որ երիտասարդները ծանոթանան այլ երկրներում գործող նորառաքելական եկեղեցու հետ:

Համերգներ եկեղեցիներում և մանկապարտեզներում

Երևան ժամանելուց անմիջապես հետո տեղի եկեղեցում կայացավ առաջին համերգը՝ կանանց

Գերմանացի երաժիշտները Վանաձորի համայնքում նվագակցում են դուդակահարին

Գյումրիում լարային քառյակի հետ նվագում է համայնքի պատանի երաժիշտը

երգչախմբի հետ միասին: Այնուհետև երաժշտական կատարումներ եղան Գյումրիում, Վանաձորում և Թբիլիսիում: Ամենուր երիտասարդ երաժիշտները համագործակցում էին տեղի երաժիշտների հետ: Վանաձորում նրանք նվագակցեցին դուդուկահարին, դուդուկը հայկական ավանդական փողային գործիքներից է:

Երաժշտական համագործակցության մեկ այլ բարձրակետ էր Թբիլիսիում ժամերգության ժամանակ նվագելը, որն անց էր կացնում առաքյալ Ռենե Ֆոլլմանը: Երիտասարդ երաժիշտների նվագակցումը ներկաներն ընդունեցին որպես մեծ օրհնություն:

Նվիրվածություն ամենափոքրերին

Երաժշտական կատարումների հետ մեկտեղ ճանապարհորդության գլխավոր բաղադրիչը նաև Գյումրիի և Ալավերդու մանկապարտեզներ այցելությունն էր: Այս երկու հաստատությունները հովանավորվում են նորառաքելական եկեղեցու բարեգործական ծրագրով:

Երիտասարդները ներկայացրեցին իրենց նվագարանները, նվագեցին մանկական ստեղծագործություններ և հնարավորություն տվեցին երեխաներին նվագել նվագարանների վրա: ,,Երեխաների ոգևորությունն ու ուրախությունը հուզիչ էր,,. տեղեկացնում է երաժիշտներից մեկը՝ Հաննա Գութցայթը: Այդ հանդիպումները պարզ դարձրին, որ ,,Երեխաներն իրենց զգում էին գնահատված և ուշադրության արժանացած այն մարդկանց կողմից, ովքեր եկել էին օտար երկրից, որպեսզի իրենց ուրախացնեն,, . ասում է Ֆաբիան Ռայչարթը՝ ճանապարհորդության նախաձեռնողն ու եկեղեցական երաժշտությունը ներկայացնող ղեկավարը:

Այստեղ երաժիշտները նվագում են Գյումրիի համայնքի համար

Երաժիշտները Թբիլիսիի եկեղուցում նվագում են ժամերգության ժամանակ

Հանդիպումներն ուժեղացնում են միասնության զգացումը

Միասին ճաշելիս և մանկապարտեզների աշխատակիցների ու տեղի համայնքների անդամների հետ մտքերի փոխանակության ժամանակ պարզ էր դառնում հավատի կապող բնույթը: Անկախ ծագումից և լեզվից՝ մասնակիցներն ապրում էին մոտիկության և միմյանց պատկանելու զգացումը՝ կրելով Հիսուս Քրիստոսի հանդեպ միասնական հավատը:

Ճանապարհորդության խիտ ծրագրի շրջանակում Գերմանիայից ժամանած այցելուները ծանոթացան նշված երկրների մշակույթներին և պատմություններին: Նրանք այցելեցին Երևանի թանգարաններից մեկը և Հաղպատի վանքային համալիր, որը Հայաստանի հյուսիսում գտնվող հայ առաքելական եկեղեցու կառույց է:

Անմոռանալի տպավորություններ և ապրումներ

Հինգ օրից հետո երիտասարդները վերադարձան Գերմանիա՝ լի ապրումներով, հանդիպումներով և տպավորություններով: Նրանք նկարագրեցին, որ իրենք եկեղեցին բոլորովին նոր ձևով են ապրել և բազմակողմանիորեն ճանաչել, ահա, թե ինչ է տալիս եկեղեցին՝ սրտաբացություն, ուրախություն, նվիրում և ոգևորություն Աստծու և նրա գործի հանդեպ: Երիտասարդ երաժիշտների համար պարզ է, որ ճանապարհորդությունը ոչ միայն արտերկրում լինելն է, այլ մերձավորի հանդեպ սիրո արտահայտություն և հավատի միասնական ըմբռնում:

Երաժշտությունը միավորում է՝ լարային քառյակի երաժշտական ճանապարհորդությունը դեպի Կովկաս

Լուսանկարները՝ Ֆաբիան Ռայչարթի

Լարային քառյակի երաժիշտներն Ալավերդու մանկապարտեզում փոքրիկներին բացատրում են լարային գործիքների վրա նվագելու տեխնիկան

Գյումրիի մանկապարտեզի երեխաները փորձում են նվագել լարերի վրա

ՊՈՂՈՍԸ ԱՓ ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ՄԵԼԻՏԻՆԵ ԿՂԶՈՒ ՎՐԱ

ԸՍՏ ԳՈՐԾ ԱՌԱՔԵԼՈՅԻ 27,28,1-10-Ի

Դեպի Հռոմ կատարած իր նավարկության ժամանակ կալանավորված Պողոս առաքյալը՝ որպես նավաբեկման ենթարկված՝ ափ դուրս Մելիտինե կղզու վրա: Այնտեղ նա ապրեց երեք ամիս:

Քամին փոխվեց հզոր փոթորկի: Նավաստիները իզուր փորձում էին ամրացնել նավը:
Հաջորդ օրը նրանք ջուրն են նետում բեռները: Փոթորիկը չէր դադարում: Մեկ օր անց ջուրն են նետում աշխատանքի գործիքներն ու բոլոր ավելորդ առարկաները, այդպես պետք է նավը թեևանար:
Երկնքում ոչ արև էր երևում, ոչ էլ՝ աստղ: Այդ հզոր փոթորկի ժամանակ ճանապարհորդողները կորցրել էին ամեն մի հույս: Սակայն, Աստված հրեշտակի միջոցով Պողոսին ասել է տալիս, որ նավի վրա գտնվող բոլոր 276 մարդիկ փրկվելու են:
Անցան տասնչորս օր ու գիշեր: Կեսգիշեր էր: Նավաստիները նետեցին սուզակապարը և տեսան, որ ջուրն այլևս խորը չէ: Նրանք վախենում էին անցնել խութի վրայով:
Նավաստիներից մի քանիսը փորձում էր փախչել կից նավակներով: Սակայն, Պողոսը զգուշացնում է, որ եթե նավաստիները նավում չմնան, նավի մեջ եղած մարդիկ չեն փրկվի: Օրը բացվելուց քիչ ժամանակ անց Պողոսն իր հետ ճանապարհորդողներին խորհուրդ տվեց ինչ-որ բան ուտել: Նա վերցրեց հացը, շնորհակալություն հայտնեց Աստծուն, կիսեց այն և սկսեց ինքն ուտել:
Երբ լուսացավ, փորձեց նավը ափին մոտեցնել, սակայն նավի ետևը ջարդուփշուր եղավ ծանծաղուտից: Մի քանիսը լողացին, մյուսները մագլցեցին ջարդված նավի գերանների վրա: Բոլոր 276 մարդկանց հաջողվեց ողջ մնալ և հասնել ցամաք:
Նրանք փրկված էին: Այն կղզին, որի վրա նրանք ափ էին դուրս եկել, կոչվում է Մելիտինե:
Կղզու բնակիչները բարեկամաբար են ընդունում նավաբեկյալներին: Քանի որ անձրևում էր ու ցուրտ էր, նրանք կրակ են վառում նրանց համար:

Պողոսն էլ էր ցախ հավաքում: Երբ նա ցախի կապը ուզում էր գցել կրակի վրա, տաքության պատճառով ցախի կապից մի իժ է դուրս գալիս և ուժեղ կծում նրա ձեռքը:

Արդյո՞ք իզուր էր փոթորկից փրկվելը: Կղզու բնակիչները իրար հարց էին տալիս՝ այս մարդը մարդասպա՞ն է: Նոր է նա ծովից փրկվել, իսկ հիմա պետք է մահանա՞ օձի խայթոցից: Ինչու՞ է այս վրեժը:

Պողոսը օձին գցեց կրակի մեջ: Կղզու բնակիչները սպասում էին, որ ձեռքը կուռչի կամ էլ հանկածակի մահացած ցած կընկնի: Նրանք երկար սպասեցին, բայց ոչինչ տեղի չունեցավ: Այնպես էր, կարծես օձը Պողոսին չէր էլ կծել:

Պոպլիոսը, որը կղզու գլխավորն էր, Պողոսին հրավիրում է իր մոտ բնակվելու: Նրա հայրը հիվանդ էր և բարձր ջերմություն ուներ: Պողոսը գնում է նրա մոտ: Նա աղոթում է նրա հետ, ձեռքերը պարզում է նրա գլխի վրա և նրան առողջացնում: Հետո գալիս են կղզու այլ հիվանդներ և բուժվում են Պողոսի շնորհով:



Աղբյուրը՝ Ամագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 09 2025; ձևավորումը՝ Միրելա Ֆորսուանատոյի

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈԶԱ ՄԻԱՅԻՆ՝ ՄԱՆԻԼԱՅՈՒՄ / ՓԻԼԻՊԻՆՆԵՐ/

Մագանդանգ արավ փո: Իմ մայրենի ֆիլիպիներենով այսպես են բարևում: Խաղաղ օվկիանոսի շուրջ 7 000 կղզիներ կազմում են Ֆիլիպիններ պետությունը: Դրանցից մեկի վրա ապրում եմ ես:

Իմ անունը Ռոզա Միա է, և ես 13 տարեկան եմ: Ես հաճույքով եմ հեռուստացույց նայում, ամենից առաջ՝ անիմացիոն ֆիլմեր, և նկարում ու գծագրում եմ, քանի որ դա հանգստացնում է ինձ: Բացի դրանից, ես խաղում եմ օն-լայն խաղեր, ամենից առաջ իմ ընկերների, քույր-եղբայրների, զարմիկ-զարմուհիների հետ:

Այստեղ ես իմ դպրոցական ընկերների հետ եմ: Նրանց շնորհիվ ես սովորել եմ, թե ինչ կարևոր է ընկերությունը, որ ես կարողանում եմ ինքս իմ մեջ վստահություն ունենալ և ես լավն եմ այնպես, ինչպես որ կամ:

Մեր եկեղեցական համայնք Մակաթիում ես ևս լավ ընկերներ ունեմ: Մակաթին Մանիլայի շրջանի 17 քաղաքներից ու համայնքերից մեկն է:

Իմ մայր Ռոզաբելլեի և իմ եղբայրներ Ռանց Ջորդանի ու Շթեֆան Կլայի հետ ապրում եմ Մանիալի մարզում: Մանիլան Ֆիլիպինների մայրաքաղաքն է և գտնվում է Լուզոն կղզու վրա: Գիտե՞ք, որ ֆիլիպինյան կղզիները ստորջրյա լեռնաշղթաների գագաթներն են: Երբ լեռներից մեկի գագաթը դուրս է գալիս

ջրից, առաջանում է կղզի: Քանի որ այդ կղզիները ընդհուպ ծովի մակերևույթի վրա են գտնվում, ֆիլիպինցիներին լուրջ սպառնում են կլիմայի փոփոխությունը և ծովի մակարդակի բարձրացումը:

Յուրատեսակ բուսականությունը և կենդանական աշխարհը, նաև Ֆիլիպինցիների մշակութային ժառանգությունը ցուցադրված է բնության պատմության ազգային թանգարանում: Այնտեղ անգամ դինոզավրերի կմախքներ կան: Թանգարանը տեղակայված է կառավարության առաջվա շենքում: մ

սիրելի ուտեստը պալաբոկն է: Դա բարակ բրնձե վերմիշել է սոուսով ու տարբեր բաղադրիչներով, օրինակ, խավարտներով, խոզի մսով կամ պինդ եփած ձվերով: Ես սիրում եմ համեմունքների համը:

Իմ մայրիկից և մորաքրոջից սովորել եմ ջութակ նվագել: Ես մեր համայնքում նվագակցում եմ նվագախմբին: Դուք ինչպե՞ս եք ներգրավվում ձեր համայնքային կյանքում:

Ալբյուրը՝ Ամազգիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 09 2025, լուսանկարները՝ մասնավոր; JLV Image Works/ Roman/hit1912/EpochXstudio/Panupong/ stock.adobe

Որտե՞ղ է այսօր Հիսուս Քրիստոսը իրեն ապրեցնել տալիս

Համայնքը մարդկային գործի արդյունք չէ, այլ՝ Աստծո արարչագործություն է, մի հոգևոր վայր, որտեղ հավատն է աճում, սերն է գործում և հույս է տրվում։

Եկեղեցին հիմնել է Հիսուս Քրիստոսը։ Քրիստոսի եկեղեցին, որը փորձարարորեն շոշափելի և տեսանելի չէ, տարբեր աստիճանի պարզությամբ է դրսևորվում տարբեր եկեղեցական համայնքներում, դրանով և յուրաքանչյուր քրիստոնեական համայնքում։ ,Էկլեսիա, հասկացությունը հստակեցնում է ընդհանրական եկեղեցու և տեղի համայնքի կապը, այն նկատի ունի ինչպես Քրիստոսի եկեղեցին ընդհանուր առմամբ, այնպես էլ՝ առանձին եկեղեցական համայնքները՝ որպես Քրիստոսի եկեղեցու տեսանելի մաս։ Եկեղեցու և տեղի համայնքի հիմքում Հիսուս Քրիստոսն է։

Քրիստոսի մարմինը

,,Քրիստոսի մարմինը,, եկեղեցու և առանձին քրիստոնեական համայնքի տիպիկ պատկերն է / Կորնթացիներին Ա 12,12/։ Այն Սուրբ Երրորդություն Աստծո անունով մկրտված և Հիսուս Քրիստոսին որպես իրենց Տեր ճանաչող հավատացյալների միասնություն է։ Քրիստոնեական համայնքն ավելին է, քան նրա անդամների գումարը։ Այն Քրիստոսին հավատացողների կենսական միաբանություն է, կենդանի օրգանիզմ, որը ղեկավարվում է Հիսուս Քրիստոսի՝ եկեղեցու գլխի կողմից / Դավանաբանություն 3,4,13/։ Կյանքը համայնքում ձևավորվում է հավատացյալների ծառայության միջոցով, ովքեր ներ են դնում իրենց շնորհները / Պետրոս Ա 4 10/։ Եկեղեցու ներսում Հիսուս Քրիստոսը առաքյալների միջոցով նախապատրաստում է իր հարսնացուական համայնքը իր մոտալուտ գալստյանը և երկնքի հարսանիքին / ՆԱԵԴ 6,1/։

Յուրաքանչյուր քրիստոնեական համայնք պետք է իր առաջադրանքը հասկանա Աստծո գործունեության ներքո։ Հիսուս Քրիստոսը ազդակ է տվել իր եկեղեցու ստեղծման համար։ Դա պարզ է դառնում Պետրոս առաքյալ վեմի վրա եկեղեցու հիմնումը/ Մատթեոս 16,18/։ Դրանից բացի, այսօր անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր առանձին համայնք իր ինքնահասկացողության և գործունեության մեջ ճանաչել տա Հիսուս Քրիստոսին։

Տեղի համայնքի և Քրիստոսի եկեղեցու միջև

Տարբեր մակարդակներն են դրսևորվում՝ տեղի քրիստոնյաների հավաքույթ՝ որպես տեղի համայնք կամ տնային համայնք / Հռոմեացիներին 16,5//, մի ողջ տարածաշրջանի համայնք / Գործք 9,31/ կամ նաև Քրիստոսի եկեղեցի՝ որպես բոլոր վայրերի ու բոլոր ժամանակների բոլոր քրիստոնյաների միասնություն / Եփեսացիներին 5,25; Կորնթացիներին Ա 12,28/։ Նորառաքելական տեսանկյունից՝ դա ընդգրկում է այս և հանդերձյալ աշխարհների հավատացյալներին, ողջերին ու մահացածներին։

Նրանք բոլորը կարիք ունեն Քրիստոսով փրկության, որը տեղեկացվում է խոսքով և խորհուրդներով։ Համայնքը, ինչպես մարմնի պատկերն իսկ հուշում է, բազմակողմանի երևույթ է։ Այն ժամերգություններ

ապրող միաբանություն է, որտեղ խորհուրդների, աղոթքի և քարոզի միջոցով տեղեկացվում է Աստծո իսկությունը: Նորառաքելական համայնքների համաբբոլորդեպքումկարևոր է,որժամերգությունը, որը ղեկավարվում է առաքյալների կողմից ձեռնադրվող հոգևորականների միջոցով, կյանքի աղբյուրն ու գլխավոր կետը լինի: Համայնքները, որոնք ընդունում են Աստծո խոսքի և խորհուրդների լիությունը, կոչված են սա պարզաբանելու և այլ մարդկանց վկայելու:

Համայնքների առաջադրանքը

Ուրեմն՝ հայանքը հոգևոր վայր է, որտեղ Սուրբ Հոգու ներգործությամբ պետք է զարգանա հավատը, ապրվի, գործնականորեն ապրի և խնամվի: Կենդանի համայնքը կարող է հավատացյալին այն բանում օգնել, որ նա հասկանա ժամերգությունների և միասնության արժեքը, և քաջալերի նրան, որ նա էլ իր նպաստը բերի համայնքային կյանքին:

Յուրաքանչյուր համայնքի առաջադրանքը նախևառաջ այն է, որ փառաբանեն Աստծուն և Հիսուս Քրիստոսին՝ մարդացած Աստծուն, խոստովանեն խոսքով և գործով: Հոգու խնամքը կարևոր առաջադրանք է ոչ միայն հոգևորականների, այլ նաև համայնքի յուրաքանչյուր անդամի համար, հատկապես, հավատքում և գործունեության մեջ միմյանց ուղեկցելը և ուժեղացնելը: ,,Տեսլականն ու միսիան,, որը պետք է ընկալել որպես դավանաբանության կարգախոս, ունի առաջնորդող սկզբունքային բնույթ: Դրանից բխում են այն առաջադրանքները, որոնք պատկանում են հավատարժան նորառաքելական համայնքին:

Համայնքները միայն արտաքնապես չեն տարբերվում, ինչպես, օրինակ շենքով, անդամների քանակով, գործող կամ լրացուցիչ ծառայությունների որակով / օրինակ, երգչախումբ կամ նվագախումբ/ կամ միջոցառումների բազմազանությամբ / համայնքի տոն և այլն/: Համայնքի ուժեղությունն ու հավատարժանությունը չի պայմանավորվում նաև մեծությամբ կամ կառուցվածքով, այլ ապրվող հոգևոր ազդեցությամբ և մերձավորի հանդեպ սիրով լցված միաբանությամբ՝ առանց անձի անհատականության: Յուրաքանչյուր մեծության համայնք, որը խնամվում և ղեկավարվում է քարոզչի կողմից, ունի գոյության իրավունք:



Ձևավորումները՝ zzve/stock.adobe

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան-Լյուք Շնայդեր, Իուբերլանդշթրասսե 243, 8051 Ցյուրիխ/ Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատարակչություն, ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր

Երբ Աստված ինքն է ,, ցտեսություն ասում,,

Ավարտական օրհությունը հեզ ցանկություն չէ, այլ աստվածային խոստում՝ ողորմածությունը, սերը և միասնությունը հավատացյալներին ուղեկցում են առօրյայում- գլխավոր առաքյալի շրջաբերական:

Ես այն տպավորությունն ունեմ, որ ծիսական այս հատվածի նշանակությունը ոչ միշտ է ճիշտ հասկացվում: Ավարտական օրհնանքը համայնքին նվիրաբերվում է Կորնթացիների Բ 13,13-ի խոսքերով՝ ,, Մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմածությունը և Աստծո սերը և Սուրբ Հոգու միասնությունը թող լինեն բոլորիդ հետ,,: Ո՞րն է սրա նշանակությունը և ընդգրկուն լինելը:

Օրհնությունն ավելին է, քան բանաձև

Ծառայողն ասում է այս խոսքերը, որպեսզի ցույց տա ժամերգության ավարտը: Աստվածաշնչի տողերը հիշեցնում են ցանկության մասին: Կարելի է ընդունել, որ ծառայողը ցանկանում է, որ ողորմածությունը, սերը և միասնությունը հավատացյալներին ուղեկցեն, սրանով նա կարծես նրանց ապահով տունդարձ է ցանկանում: Իրականում սա շատ ավելին է, քան այդ ամենը:

Աստծո կողմից այս նպատակի համար կանչված հոգևորականի հնչեցրած այս խոսքերը ներկայացնում են իսկական օրհնություն: Դրանք լի են աստվածային ուժով և ունկնդրին տալիս են հոգևոր օրհնություն:

Այս օրնհությամբ Աստված խոստանում է լսողին, որ իր ողորմածությունը, սերը և միասնությունը նրան ուղեկցելու են ամեն օր: Եվ, քանի որ Աստված անում է այն ամենը, ինչ ասում է, համայնքը կարող է գիտակցել, որ հենց այդպես էլ լինելու է: Այս խոստումը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր լսում են: Բայց, ինչպես յուրաքանչյուր օրհնության դեպքում, նրա ազդեցությունը ևս կախված է հավատից և այն ընդունող անձի վերաբերմունքից: Այստեղից էլ, ավարտական օրհնությունն ինչպես խոստում, այնպես էլ Աստծո հորդոր է:

Երրորդության օրհնություն

Կորնթացիներին Բ 13,13-ը վերաբերում է Երրորդությանը: Այստեղ մենք հիշում ենք այն մասին, որ Աստված ինչպես մեկ է, այնպես էլ երրորդություն է: Աստվածային յուրաքանչյուր անձ- Հայրը, Որդին, Սուրբ Հոգին - ճշմարիտ Աստված է: Նրանք տարբերվում են իրարից, սակայն, մեկ Աստված են: Նաև այս համատեքստում պետք է հասկացվի ավարտական օրհնությունը: Աստվածն է՝ Միակը, Ամենազոր և Կատարյալը, որ խոսում է: Աստծո գործունեությունը միշտ գործունեությունն է Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Այստեղից էլ, ողորմածությունը, սերը և միասնությունը կապված չեն աստվածային մեկ անձից, ավելին, նրանք երեքը միասին են: Կարելի է այսպես ասել, որ Հայր Աստվածը նվիրում է ողորմածությունը, Որդին հրավիրում է միասնության և Սուրբ Հոգին սերն է:

,,Հիսուս Քրիստոսի ողորմածությունը,,

Այս խոսքերով Աստված մեզ հիշեցնում է ողորմածության մասին, որը նա մեզ նվիրել է Հիսուս Քրիստոսով՝ նա մեզ ընտրել է և դարձրել իր զավակները, իր փառահեղության ժառանգակիցները / Եփեսացիներին 1, 3-14/: Նա ներել է մեր մեղքերը: Դրանից բացի, մենք շնորհակալ ենք այն ամենի համար, ինչ ունենք՝ ավելի շատ ողորմածությունից ելնելով, քան՝ մեր վաստակից: Նրանով, որ Աստված մեր հանդիպումն իր հետ որոշել է այս օրհնանքով, նա մեզ վստահեցնում է հետևյալը՝

- Մենք մնալու ենք նրա զավակները, ինչ էլ լինի- նա մեր ընտրությունը երբեք հարցականի տակ չի դնելու:
- Մենք կարող ենք վստահ լինել, որ Քրիստոսը մեզ կպաշտպանի չարի մեղադրանքներից:/ Հռոմեացիներին 8,34/:

- Մենք կարող ենք նրա ողորմածության հույսն ունենալ - նա մեզ համար հնարավոր է դարձնելու կատարելության հասնելը, որն անհրաժեշտ է նրա արքայություն մտնելու համար / Պետրոս Ա 1,13/։

Այս վստահեցումները, այնուամենայնիվ, վերաբերում են նրանց, ովքեր այնպիսի պահվածք են որդեգրում, որը համապատասխանում է Աստծո կամքին։ Աստված մեզ հորդորում է՝

- խոնարհ մնալ իր առաջ - մենք ամբողջովին արժանացել ենք Աստծո ողորմածությանը- և մարդկանց առաջ- մենք բոլորս մեղավորներ ենք;
- մեզ պահել Աստծո իսկական զավակների նման, ովքեր կանչված են նրա փառահեղության ժառանգորդները լինելու;
- այն շնորհները, որոնք մենք ստացել ենք նրանից, մյուսներին ծառայելու համար օգտագործենք / Պետրոս Ա 4,10/։

,,Աստծո սերը,,

Մինչ մենք կվերադառնանք մեր տները և կդառնանք մեր առօրյային, Աստված մեկ անգամ ևս իր սերն է հայտնում մեր հանդեպ։ Այն ամենը, ինչ նա անում է նպատակադրված է նրան, որ մենք միշտ կարողանանք իր կողքին լինել։ Նա մեր ճանապարհից վերացնելու է յուրաքանչյուր խոչընդոտ, որը կարող է խանգարել մեր փրկությանը։ Նա մեզ տալու է այն, ինչի կարիքը մենք ունենք, որպեսզի փրկվենք։

Դրա դիմաց նա հորդորում է մեզ բոլոր իրավիճակներում մնալ սիրո մեջ։ Աստված ուզում է, որ մենք ժամերգությունից հեռանանք

- այն վճռականությամբ, որ պահելու ենք նրա պատվիրանները;
- այն որոշմամբ, որ նրան ծառայելու ենք սիրուց ելնելով և ոչ թե՝ հաշվենկատությունից,
- ձգտելու ենք սիրել մերձավորին այնպես, ինչպես Աստված է նրան սիրում

,,Սուրբ Հոգու միասնությունը,,

Սուրբ Հոգու շնորհիվ մենք կարողանում ենք Աստծուն ընդունել և նրա կամքը ճանաչել։ Աստված խոստանում է մեզ, որ նա շարունակելու է խոսել մեզ հետ, որպեսզի մեզ ղեկավարի, մխիթարի և ուժեղացնի։ Նա մեզ խորհուրդ է տալիս ուշադիր լինել այն բաների վրա, ինչ նա մեզ ասում է քարոզով և մեր խղճով։

Քրիստոսի ժառանգությամբ միասնությունը ուղեկցվում է նրա տառապանքի հետ միասնությամբ / Հռոմեացիներին 8,17; Ֆիլիպացիներին 3,10/։ Աստված մեզ գիտակցել է տալիս, որ մենք շարունակելու ենք ճնշումների ենթարկվել։ Բայց, մենք պետք է վստահենք, որ նա մեզ հետ է։ Նա լսում է մեր աղոթքները և ընդունում։ Եվ, երբ մենք տկար ենք լինում աղոթքի մեջ, Սուրբ հոգին բարեխոսում է մեզ համար / Հռոմեացիներին 8, 26,27/։

Սուրբ Հոգու միասնությունը նաև սիրո միասնություն է։ Սուրբ Հոգին Քրիստոսի սերը լցրել է մեր մեջ։ Մեր առօրյային վերադառնալիս հիշենք, որ Աստված մեզ ունակ է դարձրել սիրելու մեր մերձավորին այնպես, ինչպիսին նա կա։ Շատ կարևոր է դա ցանկանալը, դրա համար ձգտելը և Աստծո օգնությունը խնդրելը։ Ավարտական օրհնությունը մեզ վստահեցնում է Սուրբ Հոգու մշտական ներկայությունը եկեղեցում։ Մենք ոչ մի պատճառ չունենք չվստահելու՝ ոչինչ չի խանգարի Սուրբ Հոգուն, որպեսզի նա հարսնացուական համայնքին առաջնորդի փեսայի հետ կատարյալ միասնության։

Ի վերջո, Սուրբ Հոգու միասնությունը անբաժան է սրբերի միասնությունից։ Մենք ունենք նույն հոգին, նույն հավատը և նույն ապագան։ Մենք ընդունում ենք նույն խոսքը և նույն հացը։ Նախքան միմյանցից հեռանալը, Աստված մեզ հիշեցնում է չմոռանալ, որ մենք մի մարմնի՝ Քրիստոսի մարմնի անդամներ ենք։ Մենք միայն այն դեպքում Աստծո հետ կունենանք իսկական միասնություն, եթե մենք միասնություն ունենանք միմյանց հետ / Հովհաննես Ա 1, 3-7/։

Մենք միշտ մեզ իրարից տարբերելու ենք։ Սակայն, Աստված չի ցանկանում, որ մենք գերի լինենք մեր տարբերություններին։ Նա մեզ հորդորում է հաղթահարել դա և ակտիվորեն նպաստել եկեղեցու միաբանությանը։ Եվ նա մեզ հիշեցնում է այն մասին, որ հավատացյալների միասնությունը միայն հոգևոր բնույթ չունի։ Այն դրսևորվում է կոնկրետ ձևով, հատկապես կարիքավորների հետ համերաշխությամբ և մարդկանց հետ բարիքների կիսմամբ / Հովհաննես Ա 3,17,18/։

Կորնթացիներին 13,13-ի վերաբերյալ այս մտքերը ամբողջական չեն։ Իհարկե, կան այլ հնարավորություններ Պողոս առաքյալի խոսքը մեկնաբանելու։ Ես պարզապես ուզում էի ավարտական օրհնության նշանակությունը վեր հանել և ցույց տալ, թե այն ինչ ազդեցություն կարող է ունենալ հավատող սրտերի վրա։

Ամենավերջին կետը՝ Այս օրհնությունը վերաբերում է նաև նրան, ով այն տեղեկացնում է։

Տեղեկատու

04.01.2026	Լյուքսեմբուրգ-Վիլլե (Լյուքսեմբուրգ)
09.01.2026	Էմբու (Քենիա)
11.01.2026	Մոմբասա (Քենիա)
18.01.2026	Թուլուզ (Ֆրանսիա)
25.01.2026	Պանամա (Պանամա)
06.02.2026	Մաամբա (Զամբիա)
08.02.2026	Լուսակա (Զամբիա)
22.02.2026	Պլաուեն (Գերմանիա)
01.03.2026	Ֆրիթաուն (Սիերրա Լեոնե)
08.03.2026	Ամերսֆուրտ (Նիդերլանդներ)
15.03.2026	Քիրշհայմ -Տեկ (Գերմանիա)
25.03.2026	Մար դե Պլատա (Արգենտինա)
27.03.2026	Կոլոնիա (Ուրուգվայ)
29.03.2026	Բուենոս Այրես (Արգենտինա)

New Apostolic Church
International